Հավելված N 8
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 26-ի N 774 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳՅՈՒՏԻ ԿԱՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳԸ), ԴՐԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են գրանցված գյուտերի, արդյունաբերական դիզայնների լիցենզիաները (այդ թվում՝ ֆրանչայզինգը), դրանց փոփոխությունները և չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումները լրացնելու, ներկայացնելու և քննարկելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Արտոնագրերի մասին» և «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքներով (այսուհետ նաև՝ օրենքներ) սահմանված հասկացությունները:

3. Լիցենզաների (լիցենզիային պայմանագրերի) գրանցումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակը (այսուհետ՝ Գրասենյակ): Լիցենզաների (այդ թվում՝ ֆրանչայզինգի) գրանցումն իրականացվում է պատշաճ ձևով տպագիր լրացված և ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգով սահմանված N 1 և N 2 ձևերի:

4. Լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագրի գրանցման դիմումը պետք է վերաբերի մեկ պայմանագրի:

5. Լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագրով կարող է նախատեսվել գյուտի, արդյունաբերական դիզայնի մեկ կամ մի քանի օբյեկտների օգտագործման թույլտվություն:

6. Գյուտին վերաբերող դիմումի դեպքում լրացվում է Ձև 1-ը, իսկ արդյունաբերական դիզայնի դեպքում՝ Ձև 2-ը:

7. Լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագրի գրանցման մասին դիմումը լրացվում է հետևյալ ձևով՝

1) 2.1-ին կետում նշվում է գյուտի պետական գրանցման համարը (համարները) կամ համապատասխան դեպքում արդյունաբերական դիզայնի պետական գրանցման համարը (համարները), որոնց համար խնդրարկվում է գրանցել լիցենզիան (ֆրանչայզինգը).

2) 3.1-ին կետում լրացվում է արտոնագրատիրոջ (լիցենզատուի) անունը, ազգանունը կամ անվանումը.

3) 3.2-րդ կետում լրացվում է արտոնագրատիրոջ (լիցենզատուի) գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն.

4) 3.3-րդ կետի վանդակը նշվում է, եթե գյուտի կամ արդյունաբերական դիզայնի իրավատերերը մեկից ավելի են: Այս դեպքում լրացուցիչ թերթի վրա ներկայացվում են նրանց տվյալները՝ համաձայն 3.1-ին և 3.2-րդ կետերի.

5) 4.1-ին և 4.2-րդ կետերում համապատասխանաբար լրացվում են արտոնագրատիրոջ (լիցենզատուի) ներկայացուցչի անունը, ազգանունը կամ անվանումը, գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն, եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով:

6) 4.3-րդ կետի վանդակը նշվում է, եթե գյուտի կամ արդյունաբերական դիզայնի իրավատերերը մեկից ավելի են, և նրանցից յուրաքանչյուրին կամ մի քանիսին ներկայացնում են իրենց ներկայացուցիչները: Այս դեպքում լրացուցիչ թերթի վրա ներկայացվում են իրավատերերի ներկայացուցիչների տվյալները՝ համաձայն 4.1-ին և 4.2-րդ կետերի.

7) 5.1-5.3-րդ կետերում լրացվում են օգտագործողի (լիցենզառուի) տվյալները՝ սույն կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերին համանման ձևով.

8) 6.1-6.3-րդ կետերում լրացվում են օգտագործողի (լիցենզառուի) ներկայացուցչի տվյալները՝ սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերին համանման ձևով.

9) 7-րդ կետում նշվում են նամակագրություն վարելու և դիմումի քննարկման ընթացքում դիմումն ստորագրող իրավասու անձի հետ անմիջական կապ հաստատելու վերաբերյալ անհրաժեշտ տվյալները՝ փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն.

10) 8-րդ կետում լրացվում է տրամադրվող լիցենզիայի ծավալը.

11) 8.1.-րդ կետը լրացվում է, եթե լիցենզիան տրամադրվում է գյուտի կամ արդյունաբերական դիզայնի ամբողջ ծավալով.

12) 8.2.-րդ կետը լրացվում է, եթե լիցենզիան տրամադրվում է մասնակի՝ գյուտի դեպքում անկախ (և դրան կից կախյալ) կետերի ծավալից ելնելով, իսկ արդյունաբերական դիզայնի դեպքում տարբերակների կամ համալիր իրի որոշ բաղադրիչների ծավալից ելնելով.

13) կախված լիցենզիայի տեսակից՝ նշվում է 9.1-9.3-րդ կետերի վանդակներից մեկը.

14) 10.1-ին կետում նշվում և լրացվում է լիցենզիայի (ֆրանչայզինգի) գործողության այն ժամկետը, որը նշված է լիցենզիային (ֆրանչայզինգի) պայմանագրում: Եթե պայմանագրում գործողության ժամկետը նշված է անժամկետ, ապա 10.2-րդ կետում նշվում է, որ գործում է մինչև արտոնագրի գործողության ժամկետի ավարտը.

15) 11-րդ կետում լրացվում է այն տարածքը, որտեղ գործում է լիցենզիան (ֆրանչայզինգը)՝ երկիրը, մարզը, քաղաքը և այլն.

16) 12.1-ին կետի համապատասխան վանդակը նշելու միջոցով նշվում է դիմումն ստորագրող անձի ով լինելը.

17) 12.2-րդ կետում լրացվում են դիմումն ստորագրող ֆիզիկական անձի անունը կամ անվան սկզբնատառը, ազգանունը և պաշտոնը.

18) 12.2.1-ին կետում դրվում է դիմումն ստորագրող ֆիզիկական անձի ստորագրությունը և նշվում ստորագրման թվականը.

19) 13.1-ին կետում լրացվում է վճարված պետական տուրքի չափը՝ թվերով: Վանդակը նշվում է, և դիմումին կցվում է վճարումը հավաստող փաստաթուղթը: «Պետական տուրքի մասին» օրենքով պետական տուրքի վճարման վերահսկման այլ մեխանիզմ (վճարման անդորրագիր ներկայացնելը բացառող) ամրագրելու դեպքում 13.1-ին կետի վանդակը չպետք է նշվի, և վճարումը հավաստող փաստաթուղթը չպետք է կցվի.

20) 13.2-րդ կետում նշվում է վճարման ձևը, օրինակ՝ բանկային անկանխիկ փոխանցում.

21) 14-րդ կետում նշվում և լրացվում է կից ներկայացվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը, եթե դրանք կան:

8. Դիմումը Գրասենյակ կարող է ներկայացվել առձեռն կամ փոստով, որին կցվում են՝

1) լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագիրը ստորագրված արտոնագրատիրոջ (լիցենզատուի) և օգտագործողի (լիցենզառուի) կողմից՝ առանց ջնջումների, կարված և համարակալված էջերով (3 օրինակ, որոնցից առնվազն մեկը բնօրինակն է).

2) օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը.

3) մի քանի արտոնագրատերերի առկայության դեպքում՝ մյուս արտոնագրատերերի համաձայնությունը լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագիր կնքելու համար, կամ արտոնագրա-տերերի միջև կնքված պայմանագիրը, որով հավաստվում է լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագիր կնքելու իր իրավունքը.

4) լիազորությունները հաստատող փաստաթուղթը, եթե դիմումը ներկայացված է արտոնագրատիրոջ կամ օգտագործողի ներկայացուցչի միջոցով:

9. Որպես ներկայացուցիչ կարող են հանդես գալ Գրասենյակում գրանցված արտոնագրային հավատարմատարները, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող ֆիզիկական անձինք և Հայաստանի Հանրապետությունում իրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք՝ կից ներկայացնելով իրենց իրավասությունները հաստատող փաստաթուղթը (լիազորագիրը):

10. Դիմումին կարող է կցվել արտոնագիրը (արտոնագրերը):

11. Դիմումը ներկայացվում է հայերենով: Դիմումին կցվող փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզվով: Այս դեպքում տվյալ փաստաթղթին կցվում է դրա հայերեն պատշաճ թարգմանությունը:

12. Դիմումն ստանալուց հետո ստուգվում է դիմումի և դրան կից ներկայացված նյութերի համապատասխանությունը սույն կարգի 3-9-րդ և 11–րդ կետերով սահմանված պահանջներին:

13. Եթե պարզվում է, որ ներկայացված նյութերը չեն համապատասխանում սույն կարգի 3-9-րդ և 11–րդ կետերով սահմանված պահանջներին, ապա հինգ աշխատանքային օրվա ընթացքում հարցում է արվում դիմումը ներկայացնողին՝ հարցումն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում բացակայող կամ ճշգրտված նյութերը ներկայացնելու առաջարկությամբ:

14. Եթե պարզվում է, որ դիմումով ներկայացված նյութերը կամ տվյալները չեն համապատասխանում գրանցամատյանում առկա տվյալներին, ապա հինգ աշխատանքային օրվա ընթացքում հարցում է արվում դիմումը ներկայացնողին՝ ներկայացված նյութերը կամ

տվյալները համապատասխանեցնել գրանցամատյանում առկա տվյալներին կամ գրանցամատ-յանում կատարել համապատասխան փոփոխությունները և ներկայացնել ճշգրտված նյութերը կամ տվյալները՝ հարցումն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

15. Սույն կարգի 13-րդ և 14-րդ կետերով նշված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում կայացվում է մերժման մասին որոշում, իսկ դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը (եթե ներկայացվել է բնօրինակը), լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագրի երկու օրինակները և լիազորագիրը, եթե այն առկա է, վերադարձվում են: Այս դեպքում կից ներկայացված նյութերի պատճենները, պայմանագրի պատճենը կամ պատճեներից մեկը պահվում են գործի նյութերում:

16. Դիմումը և դրան կից ներկայացված նյութերը սույն կարգի 3-9-րդ և 11–րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում փաստաթղթերն ստանալու օրվանից յոթ աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում է փորձաքննություն և օրենքով սահմանված պահանջները բավարարելու դեպքում կայացվում է որոշում լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագիրը գրանցելու մասին:

17. Լիցենզիային (ֆրանչայզինգի) պայմանագրի գրանցման մասին որոշման հիման վրա՝

1) լիցենզային (ֆրանչայզինգը) պայմանագիրը գրանցվում է պայմանագրերի գրանցման պետական գրանցամատյանում, որում նշվում են՝ դիմումի ստացման թվականը, լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագրի գրանցման թվականը, վճարված պետական տուրքի չափը, լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագրի գրանցման համարը, գյուտի, արդյունաբերական դիզայնի գրանցման համարը (համարները), արտոնագրատիրոջ և օգտագործողի անունը, ազգանունը (անվանումը), գտնվելու (բնակության) վայրի և երկրի ծածկագիրը, այլ նշումներ և տվյալներ, որոնք վերաբերում են լիցենզիայի (ֆրանչայզինգի) առանձնահատկություններին.

2) գրանցված լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագրի յուրաքանչյուր օրինակի վերջին էջում կատարվում է հետևյալ գրառումը՝

ա. «Սույն լիցենզիան (ֆրանչայզինգը) գրանցված է Գրասենյակում:

բ. գրանցման համարը _____ գրանցման թվականը _____ (պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը)»:

18. Գրանցված լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագրի մեկ օրինակը (բնօրինակը) պահպանվում է տվյալ գործում:

19. Գրասենյակում գրանցվում են նաև գյուտերի, արդյունաբերական դիզայնների ենթալիցենզիաները, եթե նախկինում գրանցված լիցենզիայով (ֆրանչայզինգով) նախատեսված է, որ օգտագործողը կարող է իրեն վերապահված իրավունքների շրջանակներում օգտագործման իրավունք տալ երրորդ անձանց:

20. Ենթալիցենզիաների գրանցումը խնդրարկելիս՝ ներկայացվում է լիցենզիայի (ֆրանչայզինգի) գրանցման համար նախատեսված դիմումը, որը լրացվում է սույն կարգի 7-րդ կետով սահմանված կարգով: Ենթալիցենզիաների գրանցումը կատարվում է օրենքով և սույն կարգի 6-18-րդ կետերով սահմանված կարգով: Այս դեպքում դիմումի 3-րդ կետում, որպես արտոնագրատեր նշվում է ենթալիցենզիա տրամադրող օգտագործողը:

21. Գրասենյակում գրանցման ենթակա են նաև լիցենզիայի (ֆրանչայզինգի) պայմանների փոփոխությունները, որոնք վերաբերում են լիցենզիայի (ֆրանչայզինգի) կողմերի՝ անվան, ազգանվան, անվանման, հասցեի, վերապահվող իրավունքների ծավալի, լիցենզիայի (ֆրանչայզինգի) գործողության տարածքի, լիցենզիայի (ֆրանչայզինգի) գործողության ժամկետի փոփոխությանը, ինչպես նաև գրանցման ենթակա է լիցենզիայի (ֆրանչայզինգի) չեղյալ հայտարարելը:

22. Լիցենզիայի (ֆրանչայզինգի) պայմանների փոփոխության և լիցենզիայի (ֆրանչայզինգի) չեղյալ հայտարարելու գրանցումն իրականացվում է ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգով սահմանված N 3 և N 4 ձևերի:

23. Դիմումը պետք է վերաբերի մեկ պայմանագրով նախատեսված լիցենզիայի (ֆրանչայզինգի), որին կցվում են՝

1) լիցենզային (ֆրանչայզինգի) պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին պայմանագիրը (համաձայնագիրը) կամ չեղյալ հայտարարելը հաստատող փաստաթուղթը՝ առանց ջնջումների, կարված և համարակալված էջերով (3 օրինակ որոնցից առնվազն մեկը բնօրինակն է), որոնք ստորագրված են արտոնագրատիրոջ և օգտագործողի կողմից.

2) սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը.

3) լիազորությունները հաստատող փաստաթուղթը, եթե դիմումը ներկայացված է արտոնագրատիրոջ կամ օգտագործողի ներկայացուցչի միջոցով:

24. Գյուտին վերաբերող դիմումի դեպքում լրացվում է Ձև 3-ը, իսկ արդյունաբերական դիզայնի դեպքում՝ Ձև 4-ը:

25. Լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը կամ չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումը լրացվում է հետևյալ ձևով՝

1) դիմումի վերնագրի վանդակներից մեկը նշելով՝ ընտրվում է դիմումի տեսակը և համապատասխան նշում է կատարվում նաև 1-ին կետի վանդակում.

2) 2-7-րդ կետերը նշվում և լրացվում են սույն կարգի 7-րդ կետի 1-9-րդ ենթակետերին համապատասխան ձևով.

3) 8-րդ կետի վանդակը նշվում է, եթե լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը վերաբերում է ծավալին և, 8.1-ին կետի վանդակը նշելով, ներկայացվում է լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը հաստատող փաստաթուղթը.

4) 9-րդ կետի վանդակը նշվում է, եթե լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը վերաբերում է կողմերի անվանը, ազգանվանը, անվանմանը կամ հասցեին.

5) 10-րդ կետի վանդակը նշվում է, եթե լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը վերաբերում է տարածքին, և լրացվում է այն տարածքը (երկիրը, մարզը, քաղաքը և այլն), որին վերաբերում է իցենզիայի (ֆրանչայզինգի) մեջ կատարված փոփոխությունը.

6) 11-րդ կետի վանդակը նշվում է, եթե լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը վերաբերում է գործողության ժամկետին, և, 11.1-11.2-րդ կետերի վանդակներից մեկը նշելով և լրացնելով, տեղեկություն է տրվում փոփոխված լիցենզիայի (ֆրանչայզինգի) գործողության ժամկետի վերաբերյալ.

7) 12-րդ կետի վանդակը նշվում է, եթե դիմումը վերաբերում է լիցենզիայի (ֆրանչայզինգի) չեղյալ հայտարարելը գրանցելուն, և, 12.1-12.2-րդ կետերի վանդակներից մեկը նշելով, ներկայացվում է չեղյալ հայտարարելը հավաստող փաստաթուղթը: 12-րդ կետի նշման դեպքում 8-11-րդ կետերը չեն նշվում և չեն լրացվում.

8) 13-16-րդ կետերը նշվում և լրացվում են սույն կարգի 7-րդ կետի 16-21-րդ ենթակետերի համանման ձևով:

26. Դիմումն ստանալուց հետո ստուգվում է դիմումի և դրան կից ներկայացված նյութերի համապատասխանությունը սույն կարգի 21-25-րդ կետերով սահմանված պահանջներին:

27. Եթե պարզվում է, որ ներկայացված նյութերը չեն համապատասխանում սույն կարգի 21-25-րդ կետերով սահմանված պահանջներին, ապա հինգ աշխատանքային օրվա ընթացքում հարցում է կատարվում դիմումը ներկայացնողին՝ հարցումն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում բացակայող կամ ճշգրտված նյութերը ներկայացնելու առաջարկությամբ:

28. Եթե պարզվում է, որ դիմումով ներկայացված նյութերը կամ տվյալները չեն համապատասխանում գրանցամատյանում առկա տվյալներին, ապա հինգ աշխատանքային օրվա ընթացքում հարցում է արվում դիմումը ներկայացնողին՝ ներկայացված նյութերը կամ տվյալները համապատասխանեցնել գրանցամատյանում առկա տվյալներին կամ գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխությունները և ներկայացնել ճշգրտված նյութերը կամ տվյալները՝ հարցումն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

29. Սույն կարգի 27-րդ և 28-րդ կետերով նշված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում կայացվում է մերժման մասին որոշում, իսկ դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը (եթե ներկայացվել է բնօրինակը), համապատասխան պայմանագրի կամ փաստաթղթի երկու օրինակները և լիազորագիրը, եթե այն առկա է, վերադարձվում են: Այս դեպքում կից ներկայացված նյութերի պատճենները, պայմանագրի կամ փաստաթղթի պատճենը կամ պատճեններից մեկը պահվում են գործի նյութերում:

30. Դիմումը և դրան կից ներկայացված նյութերը, սույն կարգի 21-25-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում, փաստաթղթերն ստանալու օրվանից յոթ աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում է փորձաքննություն և սահմանված պահանջները բավարարելու դեպքում ընդունվում է որոշում լիցենզիայի (ֆրանչայզինգի) պայմանների փոփոխության կամ լիցենզիայի (ֆրանչայզինգի) չեղյալ հայտարարելը գրանցելու մասին: Հակառակ դեպքում ընդունվում է որոշում լիցենզիայի (ֆրանչայզինգի) պայմանների փոփոխության կամ լիցենզիայի (ֆրանչայզինգի) չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ:

31. Գրասենյակը սույն կարգի համաձայն կատարված հարցումները, ընդունված որոշումները և քաղվածքներն ուղարկում է դիմողին նրա կողմից փաստաթուղթը ներկայացվելու համար ընտրված սկզբնական եղանակով կամ իր կողմից հետագայում ընտրված եղանակներից մեկով՝ փոստով կամ կապի այլ միջոցների օգտագործմամբ, կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ դիմողի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով: Դիմողը սույն կարգի համաձայն ստացած հարցումների պատասխանները կարող է ներկայացնել գրասենյակ՝ իր նախընտրած եղանակով՝ փոստով կամ կապի այլ միջոցների օգտագործմամբ, կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով, իսկ բնօրինակ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի դեպքում՝ միայն առձեռն կամ փոստով:

32. Եթե պարզվում է, որ դիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, ապա գրասենյակը գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին: Եթե օրենքով սահմանված պետական տուրքի վճարման վերաբերյալ տվյալը չի հայտնաբերվում համապատասխան համակարգում, ապա դիմողին հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում անդորրագրի բնօրինակը կամ տվյալ վճարման իսկության վերաբերյալ ապացույցները եռամսյա ժամկետում ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ:

33. Երեք ամսվա ընթացքում պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը չներկայացվելու կամ տվյալ վճարման իսկության մասին համապատասխան համակարգի միջոցով չհավաստիանալու դեպքում գրասենյակի կողմից կայացվում է մերժման մասին որոշում, ինչի մասին դիմողը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է սույն կարգի 31-րդ կետով սահմանված կարգով:

Ձև N 1

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի
նախարարության
մտավոր սեփականության գրասենյակ
(Երևան 0010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3)

Դ Ի Մ ՈՒ Մ

ԳՅՈՒՏԻ ԼԻՑԵՆԶԻԱՆ (ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳԸ) ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Դիմում

Սույնով խնդրարկվում է գրանցել դիմումում նշված գյուտի (գյուտերի) լիցենզիա (ֆրանչայզինգ)։

2. Սույն դիմումին վերաբերող գրանցումը (գրանցումները)՝

2.1. գրանցման (գրանցումների) համարը (համարները)* ____

3. Արտոնագրատեր (լիցենզատու)

3.1. Արտոնագրատիրոջ (լիցենզատուի) անվանումը

_____

3.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

3.3. □ արտոնագրատերերը մի քանիսն են (արտոնագրատերերի մասին տվյալները, ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

4. Արտոնագրատիրոջ ներկայացուցիչը՝

4.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

_____

4.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

4.3. □ արտոնագրատիրոջ ներկայացուցիչները մի քանիսն են (արտոնագրատերերի ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 4.1-ին և 4.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

5. Օգտագործող (լիցենզառու)՝

5.1. անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

_____

5.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

5.3. □ օգտագործողները մի քանիսն են (օգտագործողների մասին տվյալները, ըստ 5.1-ին և 5.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

6. Օգտագործողի (լիցենզառուի) ներկայացուցիչը՝

6.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

_____

6.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

6.3. □ օգտագործողների ներկայացուցիչները մի քանիսն են (օգտագործողների ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 6.1-ին և 6.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

7. Նամակագրության հասցեն

_____

8. Լիցենզիայի տրամադրման ծավալը

8.1. □ ամբողջությամբ

8.2. □ մասնակի՝ _____

_____

9. Լիցենզիայի տեսակը

9.1. □ բացառիկ լիցենզիա 9.2. □ հասարակ լիցենզիա 9.3. □ հարկադրական լիցենզիա

10. Լիցենզիայի (ֆրանչայզինգի) գործողության ժամկետը

10.1. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) գործողության ժամկետը սահմանափակ է և տրված է _____ից մինչև_____ ժամանակահատվածի համար.

10.2. □ լիցենզիան (ֆրանչայզինգը) գործում է մինչև արտոնագրի գործողության ժամկետի ավարտը:

11. Լիցենզիայի (ֆրանչայզինգի) գործողության տարածքը

_____

12. Ստորագրություններ[1]-

12.1. դիմումն ստորագրող իրավասու անձը[1]

□ արտոնագրատեր(լիցենզատու)	□ արտոնագրատիրոջ լիցենզատուի ներկայացուցիչ
□ օգտագործող (լիցենզառու)	□ օգտագործողի (լիցենզառուի) ներկայացուցիչ

12.2. Դիմումն ստորագրող ֆիզիկական անձը

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

12.2.1. ստորագրություն_____ _____

(թվականը)

13. Տուրքեր

13.1. վճարված է _____ դրամ պետական տուրք □ անդորրագիրը կցվում է

13.2. վճարման ձևը _____

14. □ Կցվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը _____

*- Շարունակությունը տրված է լրացուցիչ թերթի վրա:

[1]- Եթե դիմումն ստորագրելու են մի քանի անձինք, ապա 12.1-ին, 12.2-րդ և 12.2.1-ին կետերում նշված տվյալները ներկայացնել լրացուցիչ թերթի վրա:

Ձև N 2

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի
նախարարության
մտավոր սեփականության գրասենյակ
(Երևան 0010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3)

Դ Ի Մ ՈՒ Մ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԼԻՑԵՆԶԻԱՆ (ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳԸ) ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Դիմում

Սույնով խնդրարկվում է գրանցել դիմումում նշված արդյունաբերական դիզայնի (գյուտերի) լիցենզիա (ֆրանչայզինգ):

2. Սույն դիմումին վերաբերող գրանցումը (գրանցումները)՝

2.1. գրանցման (գրանցումների) համարը (համարները)* ____

3. Արտոնագրատեր (լիցենզատու)

3.1. Արտոնագրատիրոջ (լիցենզատուի) անվանումը

_____

3.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

3.3. □ արտոնագրատերերը մի քանիսն են (արտոնագրատերերի մասին տվյալները, ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

4. Արտոնագրատիրոջ ներկայացուցիչը՝

4.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

_____

4.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

4.3. □ արտոնագրատիրոջ ներկայացուցիչները մի քանիսն են (արտոնագրատերերի ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 4.1-ին և 4.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

5. Օգտագործող (լիցենզառու)՝

5.1. անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

_____

5.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն՝

_____

5.3. □ օգտագործողները մի քանիսն են (օգտագործողների մասին տվյալները, ըստ 5.1-ին և 5.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

6. Օգտագործողի (լիցենզառուի) ներկայացուցիչը՝

6.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը՝

_____

6.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն՝

_____

6.3. □ օգտագործողների ներկայացուցիչները մի քանիսն են (օգտագործողների ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 6.1-ին և 6.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

7. Նամակագրության հասցեն՝

_____

8. Լիցենզիայի տրամադրման ծավալը՝

8.1. □ ամբողջությամբ

8.2. □ մասնակի՝ _____

_____

9. Լիցենզիայի տեսակը՝

9.1. □ բացառիկ լիցենզիա 9.2. □ հասարակ լիցենզիա 9.3. □ հարկադրական լիցենզիա

10. Լիցենզիայի (ֆրանչայզինգի) գործողության ժամկետը՝

10.1. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) գործողության ժամկետը սահմանափակ է և տրված է _____ից մինչև_____ ժամանակահատվածի համար.

10.2. □ լիցենզիան (ֆրանչայզինգը) գործում է մինչև արտոնագրի գործողության ժամկետի ավարտը:

11. Լիցենզիայի (ֆրանչայզինգի) գործողության տարածքը՝

_____

12. Ստորագրություններ[1]-

12.1. դիմումն ստորագրող իրավասու անձը[1]

□ արտոնագրատեր(լիցենզատու)

□ արտոնագրատիրոջ լիցենզատուի ներկայացուցիչ

□ օգտագործող (լիցենզառու)

□ օգտագործողի (լիցենզառուի) ներկայացուցիչ

12.2. Դիմումն ստորագրող ֆիզիկական անձը

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

12.2.1. ստորագրություն_____ _____

(թվականը)

13. Տուրքեր

13.1. վճարված է _____ դրամ պետական տուրք □ անդորրագիրը կցվում է

13.2. վճարման ձևը _____

14. □ կցվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը _____

*- Շարունակությունը տրված է լրացուցիչ թերթի վրա:

[1]- Եթե դիմումն ստորագրում են մեկից ավելի անձինք, ապա 12.1-ին, 12.2-րդ և 12.2.1-ին կետերում նշված տվյալները ներկայացնել լրացուցիչ թերթի վրա:

Ձև N 3

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի
նախարարության
մտավոր սեփականության գրասենյակ
(Երևան 0010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3)

Դ Ի Մ ՈՒ Մ

ԳՅՈՒՏԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ (ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳԻ)

□ փոփոխությունը գրանցելու մասին □ չեղյալ ճանաչումը գրանցելու մասին

1. Դիմում

Իրավատերը (իրավատերերը) և օգտագործողը (օգտագործողները) սույնով խնդրում են գրանցել դիմումում նշված գյուտի (գյուտերի)՝

□ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը, □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) դադարեցումը

2. Սույն դիմումին վերաբերող գրանցումը (գրանցումները)՝

2.1. գրանցման (գրանցումների) համարը (համարները)* ____

3. Արտոնագրատեր (լիցենզատու)՝

3.1. արտոնագրատիրոջ անվանումը՝

_____

3.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

3.3. □ արտոնագրատերերը մեկից ավելի են (արտոնագրատերերի մասին տվյալները, ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

4. Արտոնագրատիրոջ ներկայացուցիչը՝

4.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը՝

_____

4.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն՝

_____

4.3. □ արտոնագրատերերի ներկայացուցիչները մեկից ավելի են (արտոնագրատերերի ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 4.1-ին և 4.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

5. Օգտագործող (լիցենզառու)՝

5.1. օգտագործողի (լիցենզառուի) անվանումը՝

_____

5.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն՝

_____

5.3. □ օգտագործողները (լիցենզառուները) մեկից ավելի են (օգտագործողների (լիցենզառուների) մասին տվյալները, ըստ 5.1-ին և 5.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

6. Օգտագործողի (լիցենզառուի) ներկայացուցիչը՝

6.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

_____

6.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն՝

_____

6.3. □ օգտագործողների (լիցենզառուների) ներկայացուցիչները մեկից ավելի են (օգտագործողների (լիցենզառուների) ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 6.1-ին և 6.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

7. Նամակագրության հասցեն՝

_____

8. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի)փոփոխությունը վերաբերում է ծավալին

8.1. □ փոփոխության բնույթը և ծավալը նշված են կից ներկայացված՝ լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը հաստատող փաստաթղթում.

9. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի)փոփոխությունը վերաբերում է կողմերի՝ անվանը, ազգանվանը, անվանմանը, հասցեին՝

_____

10. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) տարածքը փոփոխվել է, լիցենզիա (ֆրանչայզինգը) վերաբերում է հետևյալ տարածքին՝

_____

11. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը վերաբերում է գործողության ժամկետին

11.1. □ փոփոխված լիցենզիա (ֆրանչայզինգը) տրված է _____ից մինչև _____ ժամանակահատվածի համար

11.2. □ փոփոխված լիցենզիա (ֆրանչայզինգը) գործում է մինչև արտոնագրի գործողության ժամկետի ավարտը

12. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) չեղյալ հայտարարելը

12.1 □ չեղյալ է հայտարարվում ամբողջությամբ

12.2 □ չեղյալ հայտարարումը վերաբերում է ծավալի մի մասին

□ չեղյալ հայտարարվելու բնույթը և ծավալը նշված են կից ներկայացված՝ չեղյալ հայտարարումը հաստատող փաստաթղթում

13. Ստորագրություններ

13.1. □ իրավատեր □ իրավատիրոջ ներկայացուցիչ

13.1.1. դիմումն ստորագրող ֆիզիկական անձը՝

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

13.1.2. Ստորագրություն

_____ _____

(թվականը)

14.2. □ օգտագործող □ օգտագործողի ներկայացուցիչը-

14.2.1. դիմումն ստորագրող ֆիզիկական անձը՝

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

14.2.2. Ստորագրություն

_____ _____

(թվականը)

15. Տուրքեր

15.1. վճարված է _____ դրամ պետական տուրք ◻ անդորրագիրը կցվում է

15.2. վճարման ձևը _____

16. ◻ Կցվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը _____

*- շարունակությունը տրված է լրացուցիչ թերթի վրա:

1- եթե դիմումն ստորագրում են մեկից ավելի անձինք, ապա 13.1-ին և 13.2-րդ կետերի տվյալները ներկայացնել լրացուցիչ թերթի վրա:

Ձև N 4

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի
նախարարության
մտավոր սեփականության գրասենյակ
(Երևան 0010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3)

Դ Ի Մ ՈՒ Մ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ (ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳԻ)

□ փոփոխությունը գրանցելու մասին □ չեղյալ ճանաչումը գրանցելու մասին

1. Դիմում

Իրավատերը (իրավատերերը) և օգտագործողը (օգտագործողները) սույնով խնդրում են գրանցել դիմումում նշված գյուտի (գյուտերի)՝

□ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը, □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) դադարեցումը

2. Սույն դիմումին վերաբերող գրանցումը (գրանցումները)՝

2.1. գրանցման (գրանցումների) համարը (համարները)* ____

3. Արտոնագրատեր (լիցենզատու)

3.1. արտոնագրատիրոջ անվանումը.

_____

3.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

3.3. □ արտոնագրատերը մի քանիսն են (արտոնագրատերերի մասին տվյալները, ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

4. Արտոնագրատիրոջ ներկայացուցիչը՝

4.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

_____

4.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

4.3. □ արտոնագրատերերի ներկայացուցիչները մի քանիսն են (արտոնագրատերերի ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 4.1-ին և 4.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

5. Օգտագործող (լիցենզառու)՝

5.1. Օգտագործողի (լիցենզառուի) անվանումը

_____

5.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

5.3. □ օգտագործողները (լիցենզառուները) մի քանիսն են (օգտագործողների (լիցենզառուների) մասին տվյալները, ըստ 5.1-ին և 5.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

6. Օգտագործողի (լիցենզառուի) ներկայացուցիչը՝

6.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

_____

6.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

6.3. □ օգտագործողների (լիցենզառուների) ներկայացուցիչները մի քանիսն են (օգտագործողների (լիցենզառուների) ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 6.1-ին և 6.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա)։

7. Նամակագրության հասցեն

_____

8. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը վերաբերում է ծավալին

8.1. □ փոփոխության բնույթը և ծավալը նշված են կից ներկայացված՝ լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը հաստատող փաստաթղթում

9. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի)փոփոխությունը վերաբերում է կողմերի՝ անվան, ազգանվան, անվանման, հասցեին.

_____

10. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) տարածքը փոփոխվել է, լիցենզիա (ֆրանչայզինգը) վերաբերում է հետևյալ տարածքին

_____

11. □ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) փոփոխությունը վերաբերում է գործողության ժամկետին

11.1. □ փոփոխված լիցենզիա (ֆրանչայզինգը) տրված է _____ից մինչև _____ ժամանակահատվածի համար

11.2. ◻ փոփոխված լիցենզիա (ֆրանչայզինգը) գործում է մինչև արտոնագրի գործողության ժամկետի ավարտը

12. ◻ Լիցենզիայի (ֆրանչայզինգի) չեղյալ հայտարարելը

12.1 ◻ չեղյալ է հայտարարվում ամբողջությամբ

12.2 ◻ չեղյալ հայտարարումը վերաբերում է ծավալի մի մասին

◻ չեղյալ հայտարարվելու բնույթը և ծավալը նշված են կից ներկայացված՝ չեղյալ հայտարարումը հաստատող փաստաթղթում

13. Ստորագրություններ

13.1. ◻ իրավատեր ◻ իրավատիրոջ ներկայացուցիչ

13.1.1. դիմումն ստորագրող ֆիզիկական անձը՝

_____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

13.1.2. ստորագրություն

_____ _____

(թվականը)

14. Տուրքեր

14.1. վճարված է _____ դրամ պետական տուրք ◻ անդորրագիրը կցվում է

14.2. վճարման ձևը _____

15. ◻ Կցվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը _____

*- շարունակությունը տրված է լրացուցիչ թերթի վրա:

1- եթե դիմումն ստորագրում են մեկից ավելի անձինք, ապա 13.1-ին և 13.2-րդ կետերի տվյալները ներկայացնել լրացուցիչ թերթի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ